Կը բացուի սիրտըս անընդհատ՝
Նոր ալգերու հոգեւին:

Շղթաներու ձայնին մէջէն,
Կը լըսեմ ես բիւր երգեր,
Երգեր՝ ազա՛տ ու բոցեղէն,
Զոր նոր կեանքն է յօրիներ:

Անուրներու պըրկուովին տակ,
Թեւերս անդուլ կը շարժին,
Կ'առնեն կորովն՝ ուժն անպարփակ
Հայրենիքին նորածին:

Զէ՛, չեն քանդուիր միտքն ու հոգին,
Անոնք ազա՛տ են յաւէտ,
Հորիզոններ միշտ կը ծագին
Անոնց առջեւ լուսաւէտ:

Կ'իյնան բանտին պատերն երկաթ,
Կը սուսունին երկինքներ,

Վաղուան յոյսը նո՛ր ըսնգակաթ՝
Անոնց ճակատն է կընքեր:

* * *

Կաթիլ մ'արցունք կ'իյնայ սակոյն,
Թարթիչն ի վտր քերթողին,
Ձի կը յիշէ իր սիրական՝
Որ կ'արտասուէ առանձինն:

ԹԱՇԿԻՆԱԿԸ

Աքսորի մէջ ու բանտի մէջ էի ես,
Կալանաւոր մը որպէս,
Դո՛ւն ցանկացի՛ր ըլլալ ո՛վ քոյր, դուն յաւէտ
Իմ հոգիս վըշտին հետ:

Դուն ալ ինձի նըման աքսոր մ'էիր, քո՛յր,
Քու սըրտէդ դատ՝ ջինջ, մաքուր,
Ափսո՛ս, երբէ՛ք չունէիր դուն ո՛չ մէկ բան,
Որ տայիր ինձ գերդ նըշան:

Մի՛ թաշկինակ բայց պահուած կար կուրծքիդ տակ,
Պագերէդ լոկ յիշատակ,
Առին քենէ երբ ամէն ի՛նչ անխընձայ,
Ձայն պահեցի՛ր սրտիդ վրայ:

Ձի ան յուռութքն էր պապերուդ սրբանուէր,
Քեզ վիճակուած էր պահէլ,

Ձի ան պիտի վերականգնէր ա՛խ, մի օր...
Քու տընակդ հի՛ն, փառաւոր:

Աքսորի մէջ ու բանտի մէջ էի ես,
Կալանաւոր մը որպէս,
Բո՛յր, դուն ինձի դըրկեցի՛ր այդ թաշկինակ,
Յուռութքն ինձո՛ր գերդ պահակ:

Ու ես առի՛ պահուցումով անպարփակ՝
Այդ թաշկինակն ըսպետակ,
Ու կարգացի խորունկ վէրքեր ու վէպեր,
Ու դե՛ռ յոյսեր, բիւր, անմեռ:

Իմ քըրտնաթոր ճակատս ատով չեմ սըրբեր,
Կ'արժէր միշտ դայն համբուրել,
Բայց հարկ էր որ, քոյր քնքո՛ւշ, դայն դո՛ւն պահես,
Տէգտէմնա մը ինչպէս:

Յուռութք մ'որպէս պիտի պահէ ան իմ հոգին,
Այս օլերուն տըրտմադին,
Ձի վաղուան յոյսը հեռու չէ, աներկբայ
Պիտի ծագի մեր վրայ:

Լ Ք Ո Ւ Ս

Մարտի շեփոքն հընչած պահուն՝
Նո՛ր օրերու լուսատենչիկ,
Ձի անանպատ նետեցիդ դուն,
Երբ ցանկացի իմ հայրենիք:

Աւաղներուն մէջ հըրայրեաց,
 Բալեցն ես, լուռ, գըլխահակ,
 Յոյս մը սակայն, միշտ յեղակարծ,
 Կը բարձրանար իմ կուրծք'ն տակ:

Ո՛վ բախտ, ինչո՞ւ զիս ես ըրեր,
 Անապատի մի՛ ուղեւոր,
 Իմ հայրենիքս երբ ըստեղծել
 Հարկ էր ինձի սըրտաբուր:

Թոյլ չը տըւիր որ թափեմ ես՝
 Կովկասի սառ ճակտին վըրայ,
 Արիւնս՝ ո՛վ բախտ, շատերու պէս,
 Ազատութեան որպէս ընծայ:

Ու թոյլ տըւիր որ քալեմ ես՝
 Բալեմ ես խոնջ, դէպի Տէր-Չօր,
 Ուր կը խօսին իրերն այսպէս.
 «Այս դասճատուն մ'է ահաւոր»:

Ու այսօր՝ հոս՝ Տէր-Չօրի մէջ,
 Բանտի մը մէջ դեռ, միս-մինակ,
 Ես կը համրեմ օրերն անպերջ.
 Որպէս անբախտ մի նահատակ:

Արարատի կողքին նըստած՝
 Ո՛վ բախտ, դեղակս ալա՛տ է աւ,
 Գիւղահն՝ ուր իմ պապն է ծընած,
 Ու չէ անցած հազու մէկ դար:

ԵԿՈ՛ՒՐ ԻՆՏԻ ԴՈՒՆ ԱՅՍ ԳԻՇԵՐ

Եկո՛ւր ինձի դուն այս գիշեր,
 Ո՛վ ոգիդ մեղմ ու երկնային,
 Ու պատմէ ինձ գըզուանք ու սէր,
 Զիս՝ տանելով օրերուն հին:

Աքսորանքի ցաւերն անհուն,
 Եկո՛ւր մոռնանք մենք այս գիշեր,
 Ու մութին մէջ ի՛մ զըւարթուն,
 Երգէ՛ ինձի զըզգանք ու սէր:

Տա՛ր զիս, ոգիդ երկնանըւէր,
 Դէպի չըքնաղ իմ Հայրենիք,
 Ուր՝ ա՛խ, այսօր եղած աւեր,
 Փըլատակներ կ'երգեն մենիկ:

Երգէ՛ ազուս'ր, երգէ՛, ո՛վ, քոյր,
 Անուշ վանկովդ հողեհըմայ,
 Ու հո՛գիս նո՛ր աւելն տուր,
 Քու քընքըական կուրծքիդ վրայ:

Հեւքը սըրտիդ թող կարգամ ես,
 — Սէր ու զըզուանք— ո՛վ զըւարթուն,
 Ու մութին մէջ քուրմի մը պէս,
 Երգէ՛ անդու, երգէ՛ միշտ դուն:

Թո՛ղ սըլանանք դէպի հեռո՛ւն,
 Ալորտներուդ մէջ մեղմային,

Ու ինքնամու՛հ հին օրերուն
Հաճոյքն ապրի՛ թող մեր հոգի՛ն:

Ա՛խ, թո՛ղ մընայ մեզ այս դիշեր,
Որպէս անմեռ, երկնատուր յուշ,
Թէ՛ դըժոխքին մէջ խկ սուրբ սէր
Կըրնայ երկնել գըրախտն անուշ:

Ի՛նչ փոյթ թէ վաղն ապրինք կրկին,
Աքօտըանքի վիշտն անանուն.
Այդ վըշտին մէջ ցոյսը անգին,
Կը քընանայ, իմ դուարթուն:



ՎԵՐՋԻՆ ԳԻՇԵՐԸ

Ահա վըճիւն.— «Վաղն առաւօտ կախազան
Պիտի ելլես, ո՛վ Հնդեկ,
Քանդի եղար դուն կըրօնքիդ դաւաճան,
Ու կըռուեցար դերդ մարտիկ:»

Ինչո՛ւ սյուպէս բայց ցնցուեցար, ո՛վ ընկեր,
Այտերըդ եղան դեղնագոյն:
Թարթիչդ է վար տե՛ս, տե՛ս շիթեր են կախուեք,
Կուլա՛ս տղու մը հանգոյն:

Եիս՛ւր, Հնդեկ, եկո՛ւր նըստէ՛ ծանգիս մօտ,
Ու թոյլ տուր որ կարդամ ես:

Կաթիլ կաթիլ արցունքներդ մահահոտ,
Մահուան երկիւղն հըրտիէդ:

Վե՛ր առ աչքերդ ու սըրտդ հուսի բաղձանքներ,
Թո՛ղ հողիս մէջ հոսին,
Պատմէ՛ ինձի գաղտնիքներդ, ո՛վ ընկեր,
Վերջին դիշերդ է, վերջին:

Տե՛ս, հո՛ս, մինակ ենք բանտին մէջ, միս մինակ,
Բաց սիրտդ ինձի, ո՛վ Հնդեկ,
Պիտի երթաս, դուն դէպի մահն անյատակ,
Ես դէպի կեանք՝ Հոյրենիք: . . :

Հեկեկաց ան, բըսնեց ձեռքերս յեղակարծ,
Համբուրեց դիս խնդի պէս,
Լացա՛ւ օղեկ, օղե՛կ լացաւ սիրտն ելած,
Ու խօսեցաւ ինձ այսպէս. —

«Ես Սուրբօցի Արաբ մ՛եմ, ո՛վ Հայ ընկեր,
Ո՛ր մեկնած եմ շընդկաստան,
Քանդի թուրք լուծն առաւ ինձմէ՛ երկնանուէր,
Իմ ս՛րուհին աննըման:

Խըլեց ինձմէ՛ եմ սիրուհին աննըման,
Այդ բըռնութիւնն ահաւոր,
Ու ես փախայ դէպի երկիրն շընդկական,
Հո՛ն մոռնալու սուգն անոր:

Ու երբ մարտի շեփօրն հընչեց ընդհանուր,
Ես վազեցի դեւանըման,

Ա՛խ, քանզեւ թուրք բռնութիւնը անլուր,
Վըրէժն առնել հոսուութեան:

Ու հըսարտ եմ, առի վրէժս, այսօր Ան,
Ազատ է իմ սիրուհին,
Ի՛նչ փոյթ թէ ես պիտի ելլեմ կախաղան,²
Վերջ գըտաւ լուծը թուրքին:

Ես կը մեռնիմ, երբ ազատիս բանտէն դուն,
Լնկե՛ր, գնա՛ կալկաթա,
Ու գտի՛ր հոն իմ անձկալին, զուարթուն,
Ու տո՛ւր համբոյրս, հուսկ, անմահ:

Ըսաւ: Լըռեց: Զեռքը՝ ձեռքիս մէջ՝ ուժգին,
Կը դողըզար յուզումով,
Ես հըսկեցի ու խօսեցայ տենդազին,
Մինչեւ առտու անոր քով:



Կ Ը Ս Պ Ա Ս Ե Մ Ո Ր

Բանտին մէջն եմ կալանաւոր
Կարտով սիրտս ըսպառած:
Ես կը սպասեմ, կը սպասեմ որ
Ազատ ըլլամ ո՛խ, յանկարծ:

Հոգիս հըսարտ, ազատ կը վզոյ
Ինքզինքն այս մութ պահերուն,

Բայց սըրտիս մէջ կարօտ մը կայ,
Որ թեւ կ'առնէ օրն ի բուն:

Թեւ կ'առնէ միշտ կարօտն անհուն,
Հողիներուն երկնածին,
Որոնք սըրտով մը տրոփուն՝
Կը սպասեն իմ տուն դարձին:

Սրբունք մ'աւա՛ղ, կը կախուի վար
Թարթիչներէս բոցակէզ,
Կը սպասեմ մ'շտ, կը սպասեմ յա՛ր,
Որ շուտ անոնց գառնամ ես:

Զի հըրպրք մ'է կարօտն անմահ,
Որ կ'արծարծի ամէն ժամ,
Կ'իշխէ մըտքին, հոգւոյն վըրայ,
Կ'ըլլայ քենէ՛ անբաժան:

Ո՛վ սիրա անձկօտ, ըսպատէ դուն,
Կ'անցնին, կ'անցնին այս օրեր,
Ու կը դառնաս դէպի քու տուն,
Ուր կարօտն է լեցուցեր:



ԱՐԶԱՄԱՐԶԱՆՔ

Նետուեցաւ ան անապատներն հեռակայ,
 Հայ դատին զերդ նահատակ,
 Սակայն դարձաւ բէր զոհերու լսի վրկայ,
 Ձը քնացաւ հոյին տակ:

Այդ ճամբուն մէջ՝ կորսընցուց ան իր բուրբ
 Սիրելիներն հոգիին,
 Քոյրերն անուշ եւ ծընողներն ալեւոր,
 Անգերեզման, անշիրիմ:

Քանդեցին ցեղն՝ որուն համար տարինն՝ ը,
 Ան երազեց քուրմի պէս,
 Որուն վեշտէն այսօր գլուխն է ինկեր
 Իր կուրծքն ի վօր բացակէզ:

Մեռան իր մէջ, մեռան, աւտդ, ամէն բան,
 Աշխարհ եղաւ աւերակ,
 Սիրտն իր դարձաւ արիւնի խոր օվկէան
 Միտքն իր՝ ոճրի յիշատակ:

Բայց, լուռ, ո՛վ սիրտ, կեանքի ալիքն ահաւոր
 Թող ափէ ափ դարնէ քեզ,
 Կըրէ վըշտերն, եղի՛ր հըպալտ, սըզաւոր,
 Ու մի՛ կքիր արտմուկէզ:

Քու ատուածներդ հատիկ, հաա՛կ թո՛ղ մեռնին,
 Եղիք վըշտին դուն ընկեր,

Վիշտն ու հաճոյքն քեւեռներն են այս կեանքին,
 Ձի լսի տըկարն է լացեր:

Արհամարհանք, հըպարաութի՛ւն անասման,
 Դուք մի լըքէք իմ հոգին,
 Ձի դուք կ'ըլլաք պաշտպանն անոր միմիայն
 Ձի դուք եղեամն էք կեանքին:

Այ ապատէն նետուեցաւ ան բանտին մէջ,
 Ուր միս մինակ կը խոկայ,
 Կը խոկայ՝ բայց հպարտօրէն ու անվե՛րջ
 Թէ՛ վաղն անշուշտ պիտի գայ:

Պիտի գայ վաղն ու թէեւ ան՝ վերաւոր՝
 Պիտի ժըպտի ցընծաղին,
 Արհամարհոտ պիտի յիշէ ան՝ բուրբ
 Խաղերն անլուր այս կեանքին...



ԲԱՅՑ ԱՅՊ ԻՆՉՈ՞Ւ ԵՐԱԶ ԷՐ

Հո՛ն էի ես կովկասի Հա,աասանին մէջ յանկարծ,
 Արարատի ոտքին տակ՝ ուր գեւղակն լմ կը կանգնէր,
 Հոգիս՝ աղատ, խելայեղ, երջանկօրէն գինարբած,
 Հայ յաղթանակը կ'երգէր:

Հո՛ն էի ես, ու տեսայ արտասուագին տըքերով՝
 Մարտիկներ խոնջ, յաղթական, կոյսեր՝ հաբուած ըսպիտակ,

Ու կերգէին յաղթութիւն, մինչ կուլայի անոնց քով,
Ա՛խ, բախտս անուր, դըժընդակ:

Զի նետուեցայ անապատ, մահուան համբո, զերդ արտոբ,
Բայց պահեց զիս բախտն անդութ, սոկորներու կոյտին վրայ
Մինչ կովկասի եղբայրներս կը մըղէին ահաւոր
Նոր կեանքի մարտն արիւնլուտայ:

Արցունքն աչքիս՝ անարժան, հո՛ն էի մինչդարձեալ ես,
Հին գիւղիս մէջ, ուր այսօր «Նոր Հայաստան» են կերտեր,
Ուր կ'ըզձայի ես կանգնել արձան մ'ալ իմ աճիւնէս,
Բայց այդ ինչո՞ւ երազ էր:

ԵՐԿԻՐ՝ ԱՐԵԱՍԲ ՆԵՐԿՈՒԱԾ

Վայրերն այն՝ ուր կը շըրջիմ ես զերդ արտոբ,
Ի՛նչ ցեղեր են ըն՝ացած,
Կը կաշգամ արդ հետքերն անոնց դարասօր.
Երկիր՝ արեամբ ն' ըկըւած:

Աքրահամս հոս աճեցուց իր սերունդներ,
Աստղերուն չափ երկինքին.
Իսմայէլն հո՛ս կը հետեւէր օրհնաբեր՝
Իր Հագարին հոգեւին:

Հո՛ս էր երբեմն օր երկինքին նայեցան,
Այնու աըւին աստղերուն,

Հո՛ս կը կանգնէր դըրախտն ալ հին պատմական,
Հո՛ս ծաղկեցաւ մարդկութիւն:

Բայց դարի՛ր վերջ, հո՛ս նետուեցաւ ցեղ մը հին,
Քոստերօրդ դարուն մէջ,
Բրոնութիւնն հոս ցեղ մը չարդեց ցաւապին,
Աւտղներուն վրայ անվերջ:

Հո՛ս, ուղեւոր, կանգնէ ու տես մըջտակայ
Հետքերն անթիւ, մթամած,
Աւազի վրայ գըրուած սա տողն ալ կարդա՛յ,
«Երկիր՝ արեամբ ներկըւած...»:

ԵՐԲ ՄԱՆՈՒԿ ԷԻ

Կ'ոսոսուէի ես եղնիկի նրան,
Սըք մանուկ էի,
Պաշտեալն մէջ կամ ջուրեալն վրան,
Սա միտ կ'երգէի:

Ու եզն իմ գրասը կը յրանէր աշխարհ,
Սըք մանուկ էի:
Քար կը նեւէի ծովեզերին ի վար՝
Քաղերուն վայրի:

Խաղալուն մըն էր երկիրն ինձ կամար,
Սըք մանուկ էի,
Ու գրիտուս վրայ կապե՛ր էր կամար
Երկինքն աստղալի:

Ջո՛ւր անապատէն աչխ անբարբ՝ հեռո՛ւն՝
 Կեանքին կը նայի,
 Ջո՛ւր ա՛խ, կը կրկնեմ անցած օրերուն,
 Երբ մանուկ էի:

Ա՛խ, երանի թէ գտնէ մի վայրկեան
 Դարձեալ ապրէի
 Յոյսերն ու երազ, իդան աչն մոզական,
 Երբ մանուկ էի... :



Հ Ս Կ Ո Ւ Մ

Կէս գիշեր է, կը հրակեմ ես
 Հոգիիս վիճոն անյատակ,
 Բունն է վախեր իմ աչկերէս.
 Փոքորիկ կայ կուրծքիս շակ:

Ի՛նչ կը հրակես դուն այս պահուն,
 Ա՛՛վ սիրս, խոցուած կարեկիբ,
 Թող զար քեզի գէթ մտաւցում,
 Գիշերուան մէջ մթասուեր:

Իջի՛ր, ո՛վ բուն երկնանքիբ,
 Բո՛ւն բարեբար, արտի՛ս վրայ,
 Թո՛ղ գէթ մտանար ան իր ցաւեր
 Միևնչեւ որ յոյսն արքրննայ:

Բայց զա՛ւր, ո՛վ սիրս, կը հրակես դուն
 Խորհուրդին մէջ գիշերուան,
 Զի բունծերէն մեհապղնեան
 Լոյսի ցայտեր կ'երեւան:

Ա՛խ, այդ բունծերն կուրծքեւ պէս,
 Վեր բարձրացած կը հեւան,
 Մինչ կը հրակեմ, կը հրակեմ ես,
 Միևնչեւ յոյսերն առարան:

Գերեզման մ'է՛ Տէր-Զօրն համակ,
 Լեցուած հայու դիակով,
 Չսկե՛լ ի՛նչպէս հոգ՝ գրկաւակ,
 Երբ բանցուած ես անոր քով:

Յայտեցէ՛ք դուք, ո՛վ սկորհեր,
 Լոյսեր անհուն, աներբան,
 Ըլլան մարդուն աչկերն աւեր
 Տեսնե՛ն, տեսնե՛ն, կուրանան...:



Կ Ա Ր Օ Տ Ի Գ Ի Շ Ե Ր

Լուսնակն ինկած է խուցէս ներս այս գիշեր,
 Դիւրական ետ հարսի պէս,
 Լուսնակն ինկած՝ կուրծքի վրայ, չե՛ս յիշեր,
 Հարսանիքիս օրն՝ այսպէ՛ս...:

Բա՛յց միևնակ եմ հոս ես տխուր, մեհաւո՛ր,
 Յիշատակիդ եես միայն,

Ես կ'արձատուեմ եղևիկի պէս մեկաւոր,
Կարուսած իր վարուժան:

Կարծես է ահա ալի'՛ք, ալի'՛ք բարձրացած,
Ծովու մը պէս սնչասակ,
Ես ախոր եմ սնապասները ինկած,
Ու չի' ծրպօսիր ինձ լուսնակ:

Ո՛ր ես, ոգի', սքրիս ընկե'րն աներժան,
Քեզ կ'որոնեմ այս գիշեր,
Փոքորիկէն եղար անհետ, ցիւրցան,
Հո՛ւ միտակ եմ ու անտէր:

Բախտ մ'անջատեց մեզ իբրանէ բախտ մ'անբուր,
Մեղապաշտանի օրերուն,
Գեւ չի' հանչցած էս վեհ կողից երկնասուր,
Ու չը լրսած տրոփիւն:

Ըսուե՛ր մ'եղար եղանկաւորեան՝ որ անցար
Եմ կողիէս մի' վայրկեան,
Զո՛ր կ'որոնեմ երկրիս վրայ արդեօք, ալ
Դուն մեկնեցա՞ր յարիսեան:


Բայց այս գիշեր լուսնակն ինկած արիս վրայ,
Կը յիշեմ մեր հարսանիք,
Ես կը յիշեմ ծրպիսդ անմահ, կողեմնայ,
Ու մեր չընկալ Հայրենիք:

Դուն մեռած չես, դուն անհետ չես, կ'ապրիս դուն,
Դուն սքրիս մէջն ես յառէս,

Ո՛ր որ ըլլամ կեանքիս բոլոր օրերուն՝
Պիտի ապրի'ս ինձի հետ:

Մակայն կարօսյ կողիս մէջ այս գիշեր,
Կը բարձրանա՞յ, կը լայննայ,
Հո՛ն կ'արթննան մեր վաղանցիկ կարօս, սէր,
Լուսնակն ինկած՝ կարծիքս վրայ:

Մ'իս, կարօսի գիշերն է այս միպական,
Ես կ'արձատուեմ միս միտակ,
Եղևիկին պէս կարուսած իր վարուժան,
Թո՛ւղ չի' ծրպօսի ալ լուսնակ:



Մ Ո Ռ Ա Յ Ո Ւ Մ

Այս առաւօտ ես դարձեալ աչքերս աճա սեւեւած՝
Կը նայիմ լու՛ւն եփրատին.

Կը նայիմ լու՛ւն՝ ու անհուն յիշատակներ թեւ առած,
Կը լեցուեն իմ հոգիս:

Յիշատակներ թեւ առած, ո՛վ եղեանի սրտակերներ,
Կ'արիւնեն սիրտս անդադար,

Զախջա՛խ գամիկեր, ճաղաղիք, տե՛ս, հո՛գ զինացս են
դիպուեր,

— Զարբն անմուայ՝ դարէ դար:

Աճա՛ր կու գամ անդանքով կոյսե՛ր, հարսե՛ր հերարձակ,
Որ անագասն են նետուեր,

Ա՛խ, անապատն է նետուեր, ցեղ մ'հինաւուրց, կենսու-
ղիակն՝ անոր կիսուեր: [նախ,

Սյս առաւօտ դարձեալ ես կ'արտասուեմ լո՛ւն թախ-
Փոթորկած ս'ըստ ա՛յատակ, [ծագին,

Մեռա՛ն, ափսոս՝ ամէն բան, բո՛ւր կուռքերը կեանքին,
Փըշլըւած են կուրծքիս տակ:

Ո՛վ մոռացում փըրկարար, ո՛վ ըսփոփանք ելկնային,
Եկո՛ւր, Եջի՛ր, դուն հիմա,
Հոն՝ ուր յոյսի բեկորներ Նեմեսիսին կը նային,
Թառէ՛ անոնց բունծին վրայ:

Ձի այսօր ես կը ցանկամ անխանայ ու չըլլալ,
Թեւերուդ մէջ, մոռացո՛ւմ,
Ձի ես այսօր կ'անարգեմ դիտութիւնն ալ, օրէնքն ալ,
Սըբբութիւններն անանուն:

Չը կիտուածէ թո՛ղ այսօր լոյսն իմ աչերս արցունքստ,
Թոքերս օդով թո՛ղ չուռին,
Թո՛ղ չը հասնին ինձ ձայներ, թո՛ղ երակներս մահահոտ,
Կեանք չը ջամբ են իմ սըբտին:

Անխանա՛լ ու մուռնա՛լ, ա՛խ, ամէն բան, ամէն բան,
Բուրմի մը պէս Հընդեակական,
Մինչ ալիքները կեանքին կու դան բաղխիլ անխախտ,
Կուզան ըլլալ տեւական...:

Ա Ն Ա Շ Ի Տ Ի Ս

Ո՛վ, քաղցր հոգեակ, Անասիտ, անապատէն քեզ գըտայ,
Որպէս բեկոր մը անգին,
Հոգիս գինով՝ քու կեանքին վէպն հոգեւոյզ կը կարգայ,
Ու կ'արտասուէ տըրտնագին:

Գո՛ւն Ձէյթունի սաբերուն վըրայ աշխարհ, լոյս տեսա՛ր,
Աչքերով խո՛ր, սեւորա՛կ,
Հասակն առի՛ր նոճիկ, ոտստտեցի՛ր սարէ սար,
Եղնիկն պէս անգե՛տակ:

Հինդ տարեկան հազիւ հազի եղա՛ր հոգեակս աննըման,
Երբ բախտն անգուլթ զարկաւ քեզ,
Ու մընացի՛ր անտէրունջ, ու մ'ս մինակ յարածամ,
Լացի՛ր, օղի՛կ, ցաւակէզ:

Սրցունքն աչքիդ՝ նետեց քեզ Մեծ Փոթորիկն ահուոր,
Անապատներն հեռակայ,
Եղուն անլուր չի՛ կըրցաւ գետնալ հոգիդ սըբաւոր,
Ու քեզ Զօրի մէջ գըտայ:

Հոգեակս անուշ, Անասի՛տ, սեղմեցի քեզ Ենդի պէս,
Կուրծքիս վըրայ շարունակ,
Երջանիւթիւնն իր փախչող վերտղըտնող մը ինչպէս,
Ես գըտայ քեզ, ի՛մ աղջնակ:

Աղջնակն եղար դուն ցեղին է՛ն անբախտ մէկ զուակին,
Ո՛վ դուն անբախտը երկնատուր,

Բազբախ տաւոր եղանք մենք քանզի՛ վըշտատ մեր հողին,
Դարձաւ վիտակ մը անլուր:

Դուն Հայ ցաւին մարմնացումն ու ես ապրողը անոր,
Ի՛նչ բախտ, ի՛նչ բախտ երկնային,
Դուն կը նայիս երեքի վրայ որպէս հըսիայ սրբուհոր,
Աչքերս ալ ընդ կը նային...:

Աղու՛ք, աղու՛ք, իմ հողեակ, եկո՛ւր նըստէ կուրծքիս
Ու թոյլ տո՛ւր որ կարդամ ես, [վրայ,
կարդամ անդու վիշտն Հայուն՝ աչուկներէդ հողեհմայ,
Ո՛վ Անահիտս լուսադէտ:

Յառէ՛ ինձի աչուկներդ. թոյլ տուր թաղուիմ անոնց մէջ,
Բուրճի մը սէս երկլուղս ծ,
Տեսնեմ վըշտէն քնձիւղած Յոյն ու վրէ՛ժը անվերջ,
Վաղուան կեանքէն ըստասուած:

Տեսե՛մ հողեակ, ու ապրե՛մ արտիւններն այն արտին,
Որ բեկորն է սլատմական,
Մտանա՛մ հողեակ, ամէն բան, զի հայրիկիդ տկանջին,
Վաղուան ձայները կուզան...:

Հ Ա Մ Ր Ի Չ Ի Ս

Հա՛ս, Հա՛ս դարձիւր մասնեւրու սակ,
Խորհուրդներու զեղ սրբան,
Հա՛ս, հա՛ս պատմէ անգեալս համակ,
Վրօսեւրու պէս անբաժան:

Մէկի՛կ, մէկի՛կ կ'անցնիս կ'երբաս,
Հարթո՛վ տարվ յուսեւրու,
Մեր կամացուկ, մեր վազնիվագ,
Տարվ սրբիս վե՛ր ու յոյզ:

Դուն անվե՛րջ ես, ցաւեւրու պէս,
Կը դառնաս մի՛ս, անխրկայ,
Յուսարարն ես դուն վրօսակիդ,
Հոգիս քեզմով կ'արթնկայ:

Կը համբի՛մ ես ցաւես անհուն
Ծայր չը կայ, ա՛խ, հա՛ր չը կայ,
Դարձի՛ր համբի՛ջ, մի՛՛ս սրբուն,
Աւխարհս ալ մի՛ս կը դառնայ:

Անապատին մէջն եմ ինկիր,
Ախարական, միս միակ,
Դուն ես միայն ինձի բնկիր,
Դարձի՛ր հա՛ս հա՛ս, ցարուակ:



Վ Ե Ր Ա Դ Ա Ր Ձ

Հոգիս՝ երպարս՝ բրանութեան դե՛մ ոգեւար,
Ե՛նուզամ քեզի, ո՛վ սրնակ,
Որ կանգնեցի անապատին մէջ անծա՛յր,
Զերդ ովասիս մ'անապակ:

Կանգնեցի քեզ հայ բնկարներն հաւատած,
Ո՛վ իմ սրնակ հոգեհմայ:

Մէջ է հոգին Աւրիոյ վէս, աներան,
Աւ քրեմու սիրք Շոփայ...:

Բախտն ահաւոր ու սառապանքը անհուն
Չքնկեցիս, սեւ, այս հոգին,
Աւ քափառյած անապատներն անապատ՝
Կ'ապրի մեծ յոյսն անձկագին:

Կարանաւոր ինկայ, աւա՛ղ, բանտին մէջ,
Տուայտեցայ ի՛նչ երկար.
Բայց ուռեացուց վիշտը փրձն իմ անվերջ,
Խաւարն՝ իմ յոյսը պայծառ:

Աւ այսօր՝ ես ալ ձերբագաս կուզամ քեզ,
Մնապատի իմ սրնակ,
Կուզամ հանգչիլ, ցաւս ամոքել բոցակէզ,
Կուզամ հանգչիլ շունչից սակ:

՛Ինչ պիտի տես կազոյր ու ուժ աներկբայ,
Վրէժխրեցիք այս սրտին,
Քու մէջքդ ան վիշտերն իրեն կը մոռնայ,
Վէրք ու խանգըն կ'անհետին:

Թո՛ղ ուռեանայ քու մէջ անդու Աւրիան,
Մյո աղբրնակն է իմ աղուոր.
Թո՛ղ, բարախէ ա՛խ, Շոփայ սիրն յախտեան,
Մյո իմ քոյրն է սրգաւոր:

Աւ՝ ես անոնց այտերուն մէջ ու սրտին՝
Կ'ապրիմ գինով, եղանիկ,
Մինչեւ որ ալ փոքրիկներն անհետին
Աւ փրկուի հայրենիք...:

ՆԱՅԱՆՁԷՆ ՎԵՐՋ
ԲՈՒՆՈՒԹԵԱՆ

ՆՈՅՆ ՃԱՄԲԱՅԷՆ ԴՈՒՔ Կ'ԱՆՅՆԻՔ

Ս.հա՛ Տէր-Չօրն, ահա՛ կամուրջն ահաւոր,
Ոսկից անցնողն է մեռած,
Շէտսախէն, ահա՛ Մուարն ու Տէր-Չօր,
Ու Հասիճնն հրաքեաց:

Ս.հա՛ համբան որ կ'երկարի կամուրջն՝
Մինչեւ Քապուր ու Փարսին,
Ուր բիւր զանկեր աւազներու ընդմիջէն
Դէպի երկինք կը հային:


Հարիւր յիսուն հազար հայեր այս համբուն
Երկայնինն ի վար ցորուած են,
Անոնք՝ հազիւ անցած կամուրջն անանուն՝
Հո՛ղ ջախջախուած՝ կը երնջեն:

* * *

Երկու տարի հազիւ անցած այն օրէն,
Նոյն համբայէն դուք կ'անցնիք,
Կ'անցնիք ահա՛ դուք գրիսիկար, սրստօրէ՛ն,
Ջախջա՛խ, լրճուա՛ծ, անօրիկ:

Պիտի երնջէք յոգնասրխուր, համբուն մէջ,
Ոսկորներու կոյտի վրան,
Պիտի տեսնէք ձեր սնիբներն հո՛ղ՝ անվի՛րջ.
Որ ձեր հակսին կը գոռան.—

Մեր համբայէն կ'անցնիք ահա՛ վաս բուրեք,
Ո՛վ էակներ բարբառու,
Բայց պատմութիւն զեր մեր հակսին է կրնէք.
«Ազատութեան Մարտիւն»:



Ա Ր Ա Ք Ի Ա՛. Ա Ր Ա Ք Ի Ա՛

Արաբիա՛, Արաբիա՛ մուրին մէջ՝
Կը բընանաւ սակաւին,
Կը բընանա՛ս մինչ ալիքերդ վառ, անվի՛րջ՝
Արեւներուն կը հային...:

Ո՛ր են այսօր փառաբերդ անցեալ դարերուն,
Հե՛տքեր միայն կը մընան,
Պաշտասն հարուստ ու Դամասկոսը ժրպտան,
Սյուր կ'ուզան սրտաւանդն:

Անապատին մէջ մեր կուգար պերճաբառ
Հնչումն անհառ քու լեզուին,
Մրդ՝ ամայ եւ, խառքն ցեղեր բրտաւար
Աւազներուդ մէջ կ'աւարին:

Մրդ՝ քափուր են կողերդ անհուն, անաւեման,
Ու զուակներդ հան՝ աղիւս՝
Կը քափառին շանուն հային մի միայն,
Ու, չի ժրպտիր անապատ:

Մերք դուն փարսամ՝ զսիր զաններ աշխարհին,
 — Գիտութիւններ, օրէնքներ.
 Մերք ժպտեցար աշխատանքով մ՛եղինային,
 Աւ կրօններ եւ կ՛եռեր:

Մակայն բնէ կապսած կրօնք, ամէն բան,
 Աւ քեզ քրած աւերակ,
 Յեղ մը փայրի ի խնայ վրայ սիրական,
 Ճրգոնք քեզ իր լուծին սակ:

Աւ օր մ՛այ՛ կեր կրնցեց ճեփարն ընդհանուր,
 Ազատութեան կրօնին,
 Հայ ցեղն ինկաւ աւագներույ մէջ զբխուր,
 Ջերդ ողջակէզ դասին եին:

Բայց զառակներդ՝ որպէս գործիք բրնձութեան՝
 Գործեցին բիւր սնիրներ,
 Ո՛վ ցեղ ազնիւ, ո՛վ ցեղ հարուստ, պատմական,
 Հայ սերունդ մ՛ես ըստաններ:

Արարիա՛, Արարիա՛ կը լքե՛ս,
 Չայներ կուգան փրկութեան,
 Պիտի ըլլաս ազա՛ս, անկախ մբժսապէս,
 Ինչպէս չբնաղ Հայաստան:

Պիտի ըլլաս դուն զբացի իմ երկրին,
 Արարիա՛ քիչ չ՛անցած,
 Ազատութեան անուտ երգեր կը բրնձին
 Աւագներէդ կրայրեաց:

Բայց, մի՛ մոռնար, Արարիա՛, քէ ինչպէ՛ս
 Հայ ցեղն ինկաւ քեզ ընծայ.
 Տէր-Ջօրի մէջ հարկ է շիրիմ մը կանգնեա,
 Ջերդ ընկերի մը կրակայ:



ՔՆԱՅՈՂՆԵՐՈՒ ԵՐԱԶԸ

Չէ՛ մեռա՛՞՞ չեն, աւագներուն սակ ջերմիկ՝
 Անոնք անվերջ կ՛երագնեն.
 Մ.խ, կ՛երագնեն ազատութեան, հայրենիք,
 Աւագներու ընդօրէն:

Անապատի արեւն ուժգին, կրասապ՝
 Անոնք վրայ է փրուտած,
 Ծարաւի են շքներն անոնք, կալ ու կապ,
 Կ՛երագնեն բայց զինովցած:

Հասի՛կ, հասի՛կ սրբերնուն մէջ կ՛արբրնան,
 Յիշատակներն հայրենի,
 Տրնակն իրենց, զիմագիծներ սիրական,
 Հանին՝ որ դեռ կը նայի...:

Ահա՛, մարգեր զբրախսագեղ, ընդարձակ,
 Ո՛ւր ոչխարներ կ՛արածին,
 Ահա՛ զիլ զիլ առուակներ ջինջ ու յրսակ՝
 Որ կը հոսին ցրնձագին:

Ծարաւի եւ աւետն սակ՝ մարմբուն,
 Անոն տա կը բանան
 Շրքներն իրենց՝ ընպիլ անյա՛գ, սքրովուն՝
 Զուրն այդ մտաւ, հոտնան:

Բայց անոնի՛ գո՛ւր, չե՛ն յագենար, Երբանկնին
 Աւագներով կը լեցուի,
 Մինչ տկանջնուն ձայնը կուգայ առուակին,
 Աւ, գովուրիսն հրաւարի...:

Ահա սքրով կուգան խաղալ մարզին մէջ,
 Ա՛նսուստեկն հոն խանդավառ,
 Եղնիկի պէս կը ցակրասեն ու անվի՛րջ
 Ա՛նբրգե՛ն, կ՛նբրգեն անդադար:

Ահա ծերեր, որ ծրնկաջո՛ք, գրլխտակ՛
 Ժամուն մէջ, լուս կ՛աղօթեն,
 Կը փրփրան՝ յայտերն իրենց կուրծփին սակ,
 Արատուագին, ջերմօրէն:

Անոն մոռցած, ա՛ն, մոռցած եւ ամն բան,
 Զարդն անպատմ, անպա՛ս.
 Մոռցած՝ աւագն՝ ուր կը նընջեն յախտան,
 Աւ, չի բացուիր աչն անբարբ:

Թող երագեն քնացուներն յարժամ,
 Ա՛խ, հայրենիք ու սրնակ,
 Զի կը ժպտի ա՛յսօր դրօժը արժան՝
 Ա.յո երագին անպարժակ:

Շ Է Տ Տ Ա Տ Ի Է

Աւրիտնի ո՛վ գաւակի, որ իրագէն կ՛ելլես վեր՝
 Դըրօշով յալթ, ծըփծըփուն,
 Շէտտատիէն հո՛ս է, տե՛ս, մ՛անցնիլ անկէ անտալբեր՝
 Լուկ երգ մը քու շըրթներուն:

Մտիկ ըրէ, չե՞ս լըսեր, ձայներ հուզան ողբի պէս,
 Աւագներու ընդմիջէն,
 Աչքերդ յա՛ռէ, չե՞ս տեսներ, ահա գանկեր ողջակէզ,
 Որ «Անգլիա» կը գօչեն:

«Յանուն ազատ մարդկութեան, արդարութեան լուսավայլ,
 Հոս ինկանք մենք ցիր ու ցան,
 Հայ գուպարին ահուելի մենք գոհերն ենք բըռնավար,
 Տե՛ս, հոս է մեր գերեզման»:

«Դուն որ ահա կուգաս հոս ընել քեզի շահատան,
 Ոսկորներուն վըրայ հայ,
 Հայ դըրօշն բարեւ տուր, որպէս յարգանք մեր արեան՝
 Որ հոսեցաւ անխընայ»:

«Աւրիտնի ո՛վ գաւակի, չըլլայ կանգնես մեր վըրան,
 Յուշարձաններ փառաւոր,
 Հոս լըսէ՛ այն ձայնն արեան՝ որ կը գուռայ «Հայասան»,
 Շէտտատ! Էէն ամէն օր»:

ԾԱՆ.— Շէտտատի այն եղեռնադայրն է, որ ան-
 սակնակ աւագներու վրայ, առաւուն դիմ, կարծես իր
 բողոյ՝ կը մնան գակե՛ր, գակի՛ր գակի՛ր: Հո՛ս է
 կեղրունը Տեր-Զօրի Մեծ Զարդասան: Հոս պիտի է այցելել,
 տուներու համար, ընկրու համար այդ գակիերը:

Յ Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Դուք որ ինկաք նահատակ՝ Նէտտափէ՛ կամ Սոււա՛ր
կամ Հասիճէ՛, Րէսիււայն,
Դո՛ւք որ ինկաք հայկախոն ազատութեանը համար,
Աւաղին մէջ անասման.

Արդ, արթընցէ՛ք, եղբայրնե՛ր, Մայրեր, քոյրեր փափ-
Դուք որ ինկաք ողջակէ՛ղ, [կառուն,
Տեսէ՛ք, թուրք ցեղն ալ ինկաւ ճամբուն վըլայ անանուն
Աքսորութեան, ձեզի պէս:

Արթընցէ՛ք արդ, գըւուխնիդ բարձրացուցէք մի անգամ,
Ա՛խ, տեսնելու թէ ինչպէ՛ս
Թուրք դարաւոր բըռնութիւնն ինկաւ ջախջախ, յաւիտ-
կաղնիի գօս բունին պէս: [եան,

Տեսէ՛ք ահա պարտըւած կ'անցնի բանակը թուրքին,
Կը նահանջէ քայքայուած,
Արաբիան ազա՛տ է, ու Հայաստանն իմ անդին,
Ալ թուրք լուծէն փրկըւած:

Մինչեւ լեռներն արիւնոտ, լեռներն ահա՛ կ'լլիկեան,
Թուրք լուծն եղաւ փըլատակ,
Հըրէաստան ու Սուրիա, Արաբիա, Հայաստան,
Ալ կը պարզեն դըրօշակ:

Բայց դուք տեսէ՛ք, եղբայրներ, վեր հանած ձեր գըւ-
Աւաղներու տակ մեռնիկ. [լուխներ

Տեսէ՛ք ինչպէս ձեր քովէն կ'անցնին անըրտում ու աւեր՝
Թուրքեր անթիւ, բարբարիկ:

Կ'երթան անոնք, սակայն ո՛ւր, դի թուրք ցեղն այս եր-
Երբէք չունի հայրենիք, [կրի վրայ
Չունի յատուկ գեղարուեստ, լեզու, կըրօն հոգեհմայ՝
Ան մըրիկ մ'է, փոթորիկ:

Անոնց հարներն ալ կ'իյնան, տեսէ՛ք ո՛վ հայր եղբայ-
Անապատին մէջ մուլայ, [նէր,
Կուլան, կուլան աեսէք հոն՝ ուր քոյրեր դուք էք ինկեր,
Ձերդ, ողջակէ՛ղ դարէ դար:

Ի՛նչ փոյթ եթէ ձեր աչքերն ալ չեն տեսեր այս օրուան
Արգարութիւնն երկնային.
Ի՛նչ փոյթ եթէ ականջնիդ չեն լըսեր հեծքն անասման
Բըռնութեան վատ արցունքին:

Կը հաւատա՛մ, եղբայրներ, Մայրեր, քոյրեր փափկասուն,
Ձեր հոգիներն երջանիկ,
Կը թըռչին ալ առած արդ, աւաղներէն յարութիւն,
Դէպի չըքնաղ հայրենիք:



Ա Ղ Օ Թ Ք

Սիրս՝ աչեբուս մէջն ու վանկիս,
Բազկասարած. ծըկկաջո՛ւ՛
Կը բացամ ես ահա հոգիս,
Որ կ'արատուէ յո՛ւս, անո՛ւ:

Ես հայ աղջնակ մըն եմ փոքրիկ,
 Որ չունի այս երկրի վրայ,
 Ո՛չ ծրնողներ, ո՛չ հայրենիք,
 Լքուած արքուկ մ'որ կուլայ:

Սնապասն եմ նետուած հիմակ,
 Ձերդ հայ դասին կամաւոր,
 Միս միակ եմ երկրնինն շակ,
 Կ'որոնեմ քեզ, Տէ՛ր երգոր:

Տեսնի աչքերս եղբրակսն
 Եղբայրներուս մարտում,
 Ենդդումինն հորս եղաւ պարան
 Մազերն իմ մօրն անպասում:

Քեզ հայցեցի ես այդ պահուն
 Մրտաւաբար, հոգեւին.
 Սառեցաւ վանկն իմ օրներուն՝
 Սնապասախան ու լըւին:

Ու կը քալեմ քաղաքայաձ
 Սնապասներն ընդ երկար,
 Ձուր կ'որոնեմ զանոնք, Սասուա՛ծ,
 Ս.յիւս անո՛նք ես չեն զար:

Ի՛նչ խնդրեմ ես որպէս աղջնակ,
 Ո՛վ դուն Սասուած անարդար,
 Սի չունիմ կեանք արեւին շակ,
 Կը ենծեմեմ անգաղար:

Ձեմ խնդրե՛ր ես ալ ո՛չ մէկ բան,
 Որ ըլլայի եղանկի,
 Ձի խամբեց սիւսս Սրաքիան
 Ու ալ չը կայ հայրենիք:

Կը խնդրէի մէկ լան սրտս
 Ետարեւի, ո՛վ սէր, զայն.—
 «Սնապասին մէջ մընում ես,
 Մինչ փրկուած է Հայաստան...»



ԵՍ ՉԵՍ ԴԱՌՆԱՐ ԻՄ ՏՆԱԿ

Կ'ողբան բաւերն օրերն ի բուն,
 Հայրենիքս է աներակ.
 Մի պատմեմ ինձ արդ դառնալ տուն.
 Ես չեմ դառնար իմ սրնակ:

Տուն չունիմ ես երկրի վրայ,
 Սնոքիկ եմ, միս միակ,
 Մըրտս անդուլ արիւն կ'երբայ,
 Ես չեմ դառնար իմ սրնակ:

Սնապասներն եմ ձրգած ես
 Միւրեւիներս բովանդակ,
 Պէ՛տ է որբալ հոս միտապէս.
 Ես չեմ դառնար իմ սրնակ:

Հոն՝ օրնակս է արդէն աւե՛ր,
 Եղեւնից գերդ յիւսասակ.
 Հոս՝ գերեզման մ՛է ինձ դարձեւ.
 Ես չեմ դառնար իմ օրնակ:

Հոն՝ կրտստէ կեանք մ՛որ կուրայ
 Յուշերն անցեալ փրստակ.
 Հոս՝ կրտստէ ինձ անյուր մտե.
 Ես չեմ դառնար իմ օրնակ:

Հոն՝ բացակայ եմ հոգիներ
 Ռոնք ինկան նահասակ.
 Բունծերն անոնց հոս եմ պառկեւ.
 Ես չեմ դառնար իմ օրնակ:

Լա՛ց, ո՛վ անբախտ, լա՛ց յաւիտեան,
 Անապատին մէջ սիւնակ.
 Զօրն է հայուն սեւ գերեզման,
 Ա՛խ, մի դառնար քու օրնակ:



ՏԷՐ-ԶՕՐԻ ՈՐԲԵՐՈՒՆ ԵՐԳԸ

Յանուն Հայուն ազատութեան՝
 Մեր պապերն հոս են ինկեր,
 Աւաղներուն տակ անսասման՝
 Կը քընանան, ո՛վ ընկեր:

Հարևր յետուն հազար դո՛՛հի
 Որպէս խըլեա կն ու բեկոր,
 Այս ջարդատան մէջ մտելի՛
 Կ'երգենք ահա դէտեկոր:

Մենք Տէր-Զօրի՛ Մեծ Գահճատան
 Որբուկներն ենք, ո՛վ ընկեր,
 Արիւն ու հուր եղերական
 Մեր ճակատներն են կընքեր:

Մենք ճողոպրած ենք բոլորս ալ
 Մահուն ճակէն անանուն,
 Զերդ անմոռաց յուշ սըրտահո՛ւլ՝
 Տիեզերքին ու Հայուն:

Չունինք, չունինք ոչ հաւր կամ մտք,
 Ո՛չ ազգական հեռաւոր,
 Անօթի, մերկ, սարսափահար,
 Կ'ապրինք լըքուած, մեհաւոր:

Մենք կեանք չունինք երկի վըրայ,
 Զի հիւանդ է մեր հոգին,
 Բայց զերդ ոգին վըրէժին հայ՝
 Կ'ուզենք ապրիլ մենք կըրկին:

Ազգեր բոլոր մեզ թո՛ղ նային՝
 Որ կարդան Զարդն ըՍպիտակ.
 Մենք բաց գերքն ենք թուրք ոճիրին՝
 Արիւն, աւեր բովանդակ:

Մեր սրտերն հոս թո՛ղ քընանան
 Անգերեզման ու անհետ,
 Մինք կը կանգնենք անոնց վըրտն
 Փառքի սրձան մ'տոյաւէտ:

Վաղը կ'երթանք մենք Հայաստան,
 Կ'ընենք Տէր-Ձօրն ուխտաւայր,
 Մինք ոգին ենք Հայ Գարութեան,
 Կ'ապրինք դատի մը համար:



Ն Ե Մ Ե Ս Ի Ս

Աբստին՝քին մէջ երգեցի տըրտազին
 Զարգն ըՍսկտակ Հայ աղբին,
 Ու դռներդ արդ կուգայ բաղխել իմ հոգին,
 Վըրեժարբը Նեմեսիս:

Դիակն ահա՛ ու սոխոններն ու արիւն
 Մէկ միլիոն Հայերուն,
 Տես Արեւելքն ու Հայաստանն աւերակ
 Ու ահա Զարգն ըՍսկտակ:

Ոճի՛ր, ոճի՛ր աննախընթաց, անպատու,
 Ահա՛ թուրքին բընտուժլւն,
 Տապալելու համար այդ դօս կաղնին վէս,
 Իմ աղբն եղաւ ողջակէզ:

Զարգատան մէջ երկու տարի ոգեւար՝
 Երգած՝ ջընարբս անլար՝
 Կուգամ քեզի, բեզ նըւլրել արիւննիս,
 Վըրէժխընդեր Նեմեսիս:

Յտնուն կեանքին, ազատութեան, գեղեցկին,
 Կ'աղերսեմ բեզ սըրտագին,
 Եկուր թատիկ հոն՝ ուր խնկաւ նահատակ՝
 Դարաւոր սնը մը համակ:

Եկո՛ւր նըստիլ բուր սարող Հայերուն
 Սըրտին վըրայ արբոփուն,

Որ շունչիդ տակ վըրժժն արեան ուռճանայ,
Յանուն Մարտին մատակայ՝

Որ՝ պիտի դոյ զերդ պատասխան հայտեթեան
Հոգիներուն որ ենկան,

Որ՝ պիտի դոյ զերդ փառքն Հայուն դարէ դար,
Ո՛վ նեմեսին մըշտարդար:



Հ Ա Ն Դ Ի Պ Ո Ւ Մ

ՏԻԿԻՆ ՄԵԼԻՆԵ Մ. ԹԱԴԵՈՍԵԱՆԻՆ

Ժանտատենդով մը զըժնէ, կէս ճամբուն մէջ խմ մահուան,
Դեռ չը հասած ես Տէր-Չօր,
Պանդոկին մէջ համամի, հողուն վըրայ անկենդան,
Լքուած էի, մինաւոր...:

Դո՛ւն ալ արտոր՝ Պաղտատէն, գըրկած նարէդ նորածին,
Կ'երթայիր ո՛ւր, չե՛մ գիտեր.
Ճակատագիրը ցեղին կը նեղէր քեզ ալ ուզին
Ճարագրութեան մթաւտուեր:

Պանդոկին մէջ Համամի, նետուած անկ'ուն մ'անկենդան,
Հոգեվարքս էր անպատում,
Երբ՝ դուն եկար ինձ սյցի, սրպէս մի քոյր սիրական
Ու տեսար զիս լուռ, տըրտում:

Զէինք ճանչնար մենք զիրար, բայց ցաւը հոյ՝ անսահման՝
Աքարութեան ճամբուն վրայ,

Սըրտերն ամէն միացուց, հին ընկերի մը նըման,
Արեան ճայնն էր աներկբայ:

Ես անգլտակ՝ փռուած հո՛գ, պանդոկին մէջ, միամիակ,
Կ'ոգորէի մահուան հետ.

Դէպի հիւսիս կ'երթայիր մինչ դուն՝ բախտով դըժբնդակ,
Գուցէ ըլլալ հոն անհետ...:

Մենք իբարու նայեցանք հոգեվարքի սյդ պահուն՝
Դարձանք յանկարծ քոյր, եղբայր.

Դուն լացիր քո՛յր, վերահաս մահուան համար օրն ի բուն.
Ու, ես լացի քեզ համար:

* * *

Երկու տարի է անցած, ծագած է Այգն հոգեհմայ՝
Նոր օրերուն երազուած,

Անպատին մէջ անծայր, Պաղտատին մէջ հընօրեայ՝
Կը հանդիպինք յեղակարծ:

Բայց ինչո՞ւ, քո՛յր, կը կախուէն մեր անքն ի վար ար-
եքը կը յիշենք օրերն հին. [ցունքներ,

Ա՛խ, այդ արցունքն հոգեբուխ՝ մեզ եղեռն է կըտակեր.
Մեր մէջ զոհերը կ'ապրէն:

Ու վաղը՝ երբ դըրօշն հոյ Աբաբատէն կիւկիտ՝,
Դայ ծըփծըփալ յաղթական,

Երթանք, ո՛վ քոյր, Հայաստան, Արձանին տակ հոյ՝
Թափել արցունքն Յարութեան...: [հըսկայ



Ն Ի Թ Ե Ր ՈՒ Ց Ա Ն Կ Ը

	Էջ
Զօն	3
Յառաջաբան	4
Ա. Բարի Բամբունի վրայ	
Նախերգ	7
Երբ կ'երթոյն դէպի մահ	8
Ճամբուս վրայ	9
Եկիրառ'ն	10
Ո՛վ Հայրենի իմ տնակ	13
Աքարի Առաւօտ	14
Եթէ մեռնիմ ես յանկարծ	16
Սրտս աղջկան մը	17
Երբ ես մեկնեցոյ	17
Բազմայն մէջ տեսայ քեզ	18
Նոր անդամտան	20
Ո՛վ փանօքի, փուճ յոյսեր	21
Աքարի իրնկուն	22
Ո՛վ տարաբախտ իմ քոյրեր	23
Ողբերգ	25
Բազմայն ու երաններուն մէջ	26
Գրեգոր Զօհրապ	17
ԵՏՈՒԱ	28
ՏԷՐ-ԶՕՐ	
Սպասում	30
Տէր-Զօր	31
Յամբեցաւ ակն արցունք'ս	32
Սաբօն	33
Շրթներն երկինք բարձրոցած	35
Լքումս հոյսեր	36
Բովայն բերդը	38
Անոր Անունը	39
Յանուն փայլուն սակիին	14
Ո՛ր մաղ'ր, ա՛խ մայրիկ	42
Աքարի ծնունդ	43

Գանկին վրէժը	45
Անապատի Աղջնակիս	47
Բապուր	49
Մայր ու աղջնակ	50
Հայ Յեղին	52

Ա. Բարի բանիկն մէջ

Բանտի օրեր	55
Թաշկինակը	56
Լքում	57
Եկուք ինձի դուն այս գեշեր	59
Վերջին գեշերը	60
Կը սպասեմ որ	62
Արճամարճանը	64
Բոցց այդ ինչո՞ւ երազ էր	65
Երկիր՝ արեամբ ներկուած	66
Երբ մանուկ էի	67
Հսկում	68
Կարօտի գեշեր	69
Մոռացում	71
Անահիտիս	73
Համբիչիս	74
Վերադարձ	75

Նախապէս վերջ բանութեան

Նոյն ճամբայէն դուր կ'անցնիք	78
Արաբիա՛, Արաբիա	79
Քնացողներու երազը	81
Շէտտատիչ	83
Յարութիւն	84
Ազօթք	85
Ես չեմ դառնար իմ տնակ	87
Տէր-Զօրի որբերուն երգը	88
Նեմեսիս	91
Հանդիպում	92



ՀՀ Ազգային գրադարան



NL1600314

ՀՀ Ազգային գրադարան



NL1600313

ՀՀ Ազգային գրադարան



NL1600312

ՀՀ Ազգային գրադարան



NL1600311

